ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/34932-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում 2024 թվականի սեպտեմբերի 10-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Դեղերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-838-03.05.2024,04.09.2024-ԱՌՀ-011/1) փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկները:

«Դեղերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկում ենք՝

1) «Դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող պետական լիազոր մարմնի անմիջական մասնակցությամբ իրականացվում է դեղերի ոչնչացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն» բառերը փոխարինել «Ոչնչացման նկատմամբ վերահսկողություն իրականացնում է դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով,

2) «Ոչնչացնողն ապահովում է ոչնչացման գործընթացի տեսաձայնագրումը, որը պահպանվում է առնվազն մեկ տարի: Տեսաձայնագրման կարգը և տեսաձայնագրմանը ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը: Ոչնչացում իրականացնելու վերաբերյալ տեղեկության չտրամադրումը կամ սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրումն առաջացնում է օրենքով նախատեսված վարչական պատասխանատվություն:» բառերը փոխարինել «Ոչնչացնողն ապահովում է ոչնչացման գործընթացի տեսաձայնագրումը և միաժամանակյա համացանցային հեռարձակումը՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ իր կայքի միջոցով: Տեսաձայնագրման նյութերը պահպանվում են առնվազն 6 ամիս: Տեսաձայնագրման կարգը և տեսաձայնագրմանը ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը: Ոչնչացում իրականացնելու վերաբերյալ տեղեկության չտրամադրումը կամ սահմանված ժամկետի խախտմամբ

տրամադրումն առաջացնում է օրենքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ երկրորդ անգամ կատարելը հիմք է Տեսչական մարմնի կողմից լիցենզավորող մարմնին ոչնչացում իրականացնող լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու համար» բառերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 1-ին հոդվածով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 47.3-րդ հոդվածում լրացվող 25-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25. Պիտանիության ժամկետը լրացած կամ չգրանցված կամ կեղծ կամ օգտագործման համար ոչ պիտանի կամ օրենքի խախտմամբ ներմուծված կամ անորակ կամ չհայտարարագրված բաղադրատարրեր պարունակող դեղերի կամ դեղանյութերի կամ դեղաբուսական հումքի կամ հետազոտվող դեղագործական արտադրանքի ոչնչացում իրականացնող լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին ոչնչացման վերաբերյալ տեղեկություն չտրամադրելը կամ սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրելը կամ տեսաձայնագրում չիրականացնելը կամ տեսաձայնագրման կարգը և պայմանները խախտելը ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ոչնչացման ենթակա յուրաքանչյուր անվանմամբ դեղի՝

1) մինչև 5 դեղի փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

2) 5-ից ավելի դեղի փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով»:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ